ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2025 թ. փետրվարի 12-ին տեղի ունեցավ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի հերթական նիստը, որին գիտական խորհրդի 40 անդամներից մասնակցում էին 37-ը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի ընտրություն,
2. Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի ընտրություն,
3. Անվանական կրթաթոշակների հավակնորդների թեկնածությունների հաստատում,
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ 1. Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ներկայացրած հայտերի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոցենտ Մ. Ռ. Գաբրիելյանը, պ. գ. թ., դոց. Հ. Բ. Գրիգորյանը, պ. գ. դ., պրոֆ. Ա. Ա Ստեփանյանը և այլք:

Մ. Ռ. Գաբրիելյանը նշեց, որ թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ թեկնածու՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Սմբատ Խանամիրի Հովհաննիսյանը:

Նրա ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի պայմաններին, քննարկվել են ռեկտորատում՝ մանդատային հանձնաժողովում, այնուհետև՝ քննարկման համար ուղարկվել են ֆակուլտետ:

Համաշխարհային պատմության ամբիոնն իր նիստում՝ քննարկելով հարցը, միաձայն երաշխավորել է Ս.Հովհաննիսյանի թեկնածությունը ֆակուլտետի գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը ներկայացրեց Ս.Հովհաննիսյանի փաստաթղթերը:

Նա նշեց, որ Ս. Հովհաննիսյանը 2005-2010 թթ. եղել է ԵՊՀ Համաշխարհային պատ-մության ամբիոնի հայցորդ: 2009 թվականի հոկտեմբերից աշխատանքի է անցել նույն ամբիոնում նախ՝ որպես դասախոս, 2010 թ. սեպտեմբերից՝ ասիստենտ, 2013 թ. հունվարից առայսօր՝ դոցենտ: Վերջին 10 ամիսներին եղել է Համաշխարհային պատմության ամբիոնի

վարիչի պաշտոնակատար: Զուգահեռաբար՝ 2012 թ. դեկտեմբերից մինչև 2019 թ. օգոստոս աշխատել է Այբ դպրոցում՝ որպես պատմության ուսուցիչ: Որպես հրավիրյալ դասախոս՝ 2015 թվականից դասախոսում է նաև Հայաստանի ամերիկյան համալսարանում: Պատմության ֆակուլտետի պատմության բաժնի բակալավրիատում և մագիստրատուրայում նա վարում է տեսական և գործնական մի շարք դասընթացներ, որոնց թվում՝ «Միջին դարերի պատմություն», «Հռոմեական ժառանգություն և եվրոպական հանրույթներ», «Քաղաքակրթությունների տեսություն. պատմություն և գրություն», «Համաշխարհային պատմության տեսություն. մասնագիտության արդի հիմնահարցերը», «ԱՄՆ պատմություն. քաղաքական համակարգ, գաղափարախոսություն և միջազգային զարգացումներ», «Համաշխարհային պատմության աղբյուրագիտություն», «Պատմության և մշակույթի առնչություններ. դարաշրջաններ, տեսություններ, հարացույցներ» դասընթացները: Ղեկավարել և ղեկավարում է ավարտական և մագիստրոսական թեզեր: 2024-2025 ուստարում ունի 0,75 դրույք ծանրաբեռնվածություն:

Ս. Հովհաննիսյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: 2010 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Նա երեք մենագրությունների (մեկը համահեղինակությամբ), չորս ուսումնամեթոդական աշխատանքների՝ այդ թվում՝ երկու դպրոցական դասագրքերի (մեկը՝ համահեղինակությամբ) և շուրջ 40 գիտական հոդվածների հեղինակ է: 2018-2024 թթ. նա հեղինակել է մեկ մենագրություն, 8 գիտական հոդվածներ (դրանցից 4-ը՝ 2018 թ.), 4 ուսումնամեթոդական աշխատանքներ, ինչը բավարար է ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար:

Ս. Հովհաննիսյանը 2011 թ. սեպտեմբերից մասնակցել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրին: Առաջին հնգամյա փուլում հավաքել է 33 կրեդիտ, իսկ երկրորդ փուլում՝ 34 կրեդիտ: 2023 թ.-ից մասնակցում է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման ծրագրին և հավաքել է 5 միավոր:

Ս. Հովհաննիսյանն իր գործի մեջ բանիմաց է: Նրա դասախոսություններն աչքի են ընկնում պատշաճ մակարդակով, փաստագրական նյութի հագեցվածությամբ: Նա բնավո-

ությամբ բարեկիրթ է, ուսանողության նկատմամբ ուշադիր: Նրա վերջին հինգ տարիների ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,86 միավոր:

Մրցութային հանձնաժողովը, ելնելով վերոհիշյալից, երաշխավորում է պատմական - գիտությունների թեկնածու, դոցենտ Սմբատ Հովհաննիսյանին մասնակցելու ԵՊՀ Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին:

Այնուհետև ծրագիրը ներկայացնելու համար ձայնը տրվեց Ս. Հովհաննիսյանին: Նա ներկայացեց ամբիոնի զարգացման իր տեսլականը, առանձնացնելով նաև կրթական գործընթացի կատարելագործման սեփական մոտեցումներն ու տեսակետները:

Ելույթներից ու հարցուպատասխանից հետո դեկան Մ.Գաբրիելյանն առաջարկեց բաց քվեարկությամբ որոշել Ս.Խ.Հովհաննիսյանի թեկնածությունը փակ գաղտնի քվեարկության թույլատրելու հարցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն, որոշվեց Ս.Խ.Հովհաննիսյանին թույլատրել քվեարկության և նրա անունը ներառել քվեաթերթիկում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. թ., դոցենտ Վ.Հակոբյան /նախագահ/, անդամներ՝ պ. գ. թ., դոց. Կ.Գասպարյան, պ.գ.թ., ասիստենտ Ք.Յախշյան, Գ.Կարապետյան, է.Բաղդասարյան:

Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի 40 անդամից 37-ը:

Սմբատ Խանամիրի Հովհաննիսյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 17, դեմ՝ 18, անվավեր՝ 2:

Այսպիսով, ամբիոնի վարիչի պաշտոնի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած:

Մ.Ռ.Գաբրիելյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին /կողմ՝ 36, անվավեր՝ 1/:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քանի որ պաշտոնի միակ հավակնորդը չի ստացել գիտական խորհրդի անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությունը, ուստի Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած:

ԼՍԵՑԻՆ 2. Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար ներկայացրած հայտերի քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - ֆակուլտետի դեկան, պ. գ. թ., դոցենտ Մ. Ռ. Գաբրիելյանը, պ. գ. թ., դոց. Հ. Բ. Գրիգորյանը և այլք:

Մ. Ռ. Գաբրիելյանը նշեց, որ թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար դիմել են երկու թեկնածուներ՝ ամբիոնի վարիչի պաշտոնակատար, արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Լևոն Բաբկենի Զուգասզյանը և նույն ամբիոնի դոցենտ, արվ. թեկնածու Զարուհի Ավետիսի Հակոբյանը:

Նրանց ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են մրցույթի պայմաններին, քննարկվել են ռեկտորատում՝ մանդատային հանձնաժողովում, այնուհետև՝ քննարկման համար ուղարկվել են ֆակուլտետ:

Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնն իր նիստում՝ քննարկելով հարցը, երաշխավորել է Լ. Զուգասզյանի թեկնածությունը ֆակուլտետի գիտական խորհրդում փակ, գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար: Եվ, թեև ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնն իր 2025 թ. փետրվարի 7-ին կայացած թիվ 6 նիստում քվեարկությամբ (0 կողմ, 3 դեմ, 1 ձեռնպահ) Զարուհի Հակոբյանին չի երաշխավորել, բայց ներկայացված փաստաթղթերը հիմք են տալիս, որ նա մասնակցի ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթին:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Հ. Բ. Գրիգորյանը ներկայացրեց Զարուհի Հակոբյանի և Լևոն Զուգասզյանի փաստաթղթերը:

Նա նշեց, որ Զարուհի Հակոբյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել է 1998 թվականից՝ աշխատելով ԵՊՀ Պատմության ֆակուլտետի հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնում՝ որպես լաբորանտ (սեպտեմբեր 1998 – օգոստոս 2000), ապա՝ դասախոս (սեպտեմբեր 2000 – օգոստոս 2010), ասիստենտ (սեպտեմբեր 2010 – օգոստոս 2017) և դոցենտ (2017 թ. սեպտեմբերից առայսօր): Դասախոսել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի «Հայ արվեստի պատմություն և տեսություն», «Մշակութաբանություն» և «Կովկասագիտություն» բաժիններում: Դրան զուգահեռ ղեկավարել և ղեկավարում է

ավարտական և մագիստրոսական թեզեր: Հինգ ասպիրանտների գիտական ղեկավար է: 2024-2025 ուստարում նրա ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմում է 0,5 դրույք:

2013 թվականից առայսօր որպես հրավիրյալ դասախոս Զ. Հակոբյանը դասավանդում է նաև Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայում:

Զ. Հակոբյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: 2008 թ. փետրվարին Մոսկվայի պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Երկու գրքերի (մեկը համահեղինակությամբ), Հայաստանի ու միջազգային պարբերականներում և գիտական ժողովածուներում հրապարակված շուրջ 80 հոդվածների ու գրախոսությունների հեղինակ է: Մասնակցել է հանրապետական և միջազգային 54 գիտաժողովների:

2019-2024 թթ. Զ. Հակոբյանը հեղինակել է մեկ գիրք (համահեղինակությամբ), 23 գիտական հոդվածներ (4-ը՝ համահեղինակ), 5 գրախոսություններ (մեկը համահեղինակ), որոնցից 11-ը՝ անգլերեն լեզվով: Դրանցից 10-ը հրապարակվել են ազդեցության գործակից ունեցող կամ ՀՀ ԲՈԿ-ի ցուցակներում տեղ գտած ամսագրերում ու ժողովածուներում, ինչը միանշանակ իրավունք է տալիս, որ նա մասնակցի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

2023 թ. առայսօր Զ. Հակոբյանը Գեղարվեստի պետական ակադեմիայի «Տարեգիրք» գիտական պարբերականի գլխավոր խմբագիրն է: Ընդգրկված է Հայաստանի և միջազգային մի քանի պարբերականների խմբագրական խորհուրդների կազմում:

Հանձնաժողովը միաժամանակ նշում է, որ Զ. Հակոբյանն իր գործի մեջ բանիմաց է: Նրա դասախոսություններն աչքի են ընկնում գիտական պատշաճ մակարդակով և նյութի մատուցման մատչելիությամբ: Զ. Հակոբյանն ուսանողության նկատմամբ ուշադիր է և պահանջկոտ: Բնավորությամբ բարեկիրթ է և ակտիվ: Ուշադիր է գործընկերների և ուսանողների նկատմամբ: Նա վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը: Նրա վերջին հինգ տարիների ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,86 միավոր:

Ներկայացնելով Լ.Զուգասզյանի ներկայացրած փաստաթղթերը, մանդատային հանձնաժողովի նախագահ Հ.Գրիգորյանը նշեց, որ ԵՊՀ հայ արվեստի պատմության և

տեսության ամբիոնը ևս 2025 թ. փետրվարի 7-ին կայացած թիվ 6 նիստում, գնահատելով Լևոն Չուգասզյանի աշխատանքային ու դասախոսական բազմամյա փորձը նույն ամբիոնի վարիչի, ներկայումս՝ վարիչի ժամանակավոր պաշտոնակատար աշխատած ժամանակահատվածում դրսևորած կազմակերպական կարողությունները, միաձայն (4 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ) քվեարկությամբ երաշխավորել է, որ Լևոն Չուգասզյանը մասնակցի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Լևոն Չուգասզյանի աշխատանքային, ապա՝ գիտական և դասախոսական գործունեությունն անխզելիորեն կապված է ԵՊՀ-ի հետ: Ասպիրանտուրան ավարտելուց հետո՝ 1978 թվականից սկզբնապես աշխատել է ԵՊՀ-ի գիտական մասի տեսուչ, դրանից հետո՝ ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների կենտրոնի լաբորանտ, ապա կրտսեր և ավագ գիտաշխատող: Գիտական աշխատանքին զուգընթաց հայ և այլ արվեստների պատմություն է դասավանդել ԵՊՀ-ում, գեղարվեստա-թատերական և պոլիտեխնիկական ինստիտուտներում:

1996 թվականից Լ. Չուգասզյանը գլխավորում է իր իսկ ջանքերով և ՅՈՒՆԵՍԿՕ-ի գիտաթոշակով ու հովանավորությամբ բացված ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնը, մինչև 2023 թվականը՝ որպես ամբիոնի վարիչ, 2023 թ. առայսօր՝ որպես ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Նրա անմիջական ղեկավարությամբ են կազմվել և կյանքի կոչվել արվեստաբանություն մասնագիտության բակալավրիատի ու մագիստրոսական ծրագրերը: Թե՛ մեկում, թե՛ մյուսում Լ. Չուգասզյանը դասախոսում է մի շարք առանցքային դասընթացներ: Դրան զուգահեռ նա ղեկավարել և ղեկավարում է ավարտական և մագիստրոսական թեզեր: 2024-2025 ուստարում նրա ուսումնական ծանրաբեռնվածությունը կազմում է 1 դրույք:

Համալսարանում դասախոսական աշխատանքին զուգահեռ Լ. Չուգասզյանը տարբեր տարիների հայ արվեստի պատմություն է դասավանդել Իտալիայում՝ Բոլոնիայի համալսարանում, ԱՄՆ-ում՝ Լոս Անջելեսի և Ֆրեզնոյի համալսարաններում, Հունգարիայում՝ Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպական և Գերմանիայում՝ Հալլեի համալսարաններում: 1992-2023 թթ. հայ արվեստին վերաբերող գիտաթեմաներով դասախոսություններ է կարդացել ԱՄՆ-ի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Գերմանիայի, Հունգարիայի, Ռումինիայի, Բելգիայի տասնյակ համալսարաններում և այդ

երկրների հայկական կենտրոններում: Հայ արվեստին նվիրված զեկուցումներով հանդես է եկել Հայաստանում և աշխարհի տասնյակ երկրներում գումարված 64 գիտաժողովներում:

Լ. Չուգասզյանը դասախոսական աշխատանքին զուգահեռ զբաղվում է նաև գիտահետազոտական աշխատանքով: 1982 թ. Թբիլիսիում պաշտպանել է «13-րդ դարի հայ մանրանկարիչ Գրիգոր Ծաղկողի արվեստը» խորագրով թեկնածուական ատենախոսությունը, իսկ 2001 թ. Մոսկվայում՝ «Թորոս Ռոսլինի արվեստը 13-րդ դարի Կիլիկյան Հայաստանի մշակութային կապերի կոնտեքստում» թեմայով դոկտորական ատենախոսությունը: Բացի այդ, յոթ մենագրությունների ու գրքերի և շուրջ 300 հոդվածների ու գրախոսականների հեղինակ է: Դրանք նվիրված են հայ մանրանկարչության վարպետներին և հուշարձաններին, արծաթագործության, փայտարվեստի, քանդակագործության երկերին, ճարտարապետական կոթողներին, 18-20-րդ դարերի հայ գեղանկարիչներին, Հայաստանում և Սփյուռքում ստեղծագործած արվեստագետների գեղարվեստական ժառանգությանը:

2019-2024 թվականներին Լ. Չուգասզյանը հեղինակել է մեկ մենագրություն, 11 գիտական հոդվածներ, մեկ զեկուցման հիմնադրույթներ, որոնց մեծ մասը անգլերեն են: Դա միանշանակ իրավունք է տալիս, որ նա մասնակցի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Լ. Չուգասզյանը 2016 թ. ավարտել է ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական հնգամյա ծրագիրը և ստացել համապատասխան վկայական:

Լ. Չուգասզյանն իր գործի մեջ բանիմաց է: Նրա դասախոսություններն աչքի են ընկնում գիտական բարձր մակարդակով և նյութի մատուցման մատչելիությամբ: Լ. Չուգասզյանն ուսանողության նկատմամբ ուշադիր է և պահանջկոտ: Բնավորությամբ բարեկիրթ է և ակտիվ: Ուշադիր է գործընկերների և ուսանողների նկատմամբ: Նա վայելում է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հարգանքը: Գիտամանկավարժական մեծ վաստակի համար Լ. Չուգասզյանը 2009 թ. արժանացել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության պատվոգրի, 2012 թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության և նախագահի ոսկե մեդալների: 2012 թ. նրան շնորհվել է ՀՀ Մշակույթի վաստակավոր գործչի կոչում: Նրա վերջին հինգ տարիների ուսանողների սոց. հարցումների միջին գնահատականը կազմում է 4,72 միավոր:

Այնուհետև իրենց ծրագիրը ներկայացնելու համար ձայնը տրվեց նախ Զ.Հակոբյանին, ապա Լ.Զուգասզյանին: Նրանք ներկայացրին ամբիոնի զարգացման իրենց տեսլականները, առանձնացնելով նաև բացթողումները, առկա խնդիրները, ինչպես նաև կրթական գործընթացի կատարելագործման սեփական մոտեցումներն ու տեսակետները:

Ելույթներից ու հարցուպատասխանից հետո դեկան Մ.Գաբրիելյանը առաջարկեց բաց քվեարկությամբ որոշել Զ. Հակոբյանի և Լ. Զուգասզյանի թեկնածությունները փակ գաղտնի քվեարկության թույլատրելու հարցը:

Բաց քվեարկությամբ, միաձայն, որոշվեց Զ. Հակոբյանին և Լ. Զուգասզյանին թույլատրել քվեարկության և նրանց անունները ներառել քվեաթերթիկում:

Քվեարկությունը կազմակերպելու համար ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ պ. գ. թ., դոցենտ Վ. Հակոբյան /նախագահ/, անդամներ՝ պ. գ. թ., դոց. Կ. Գասպարյան, պ.գ.թ., ասիստենտ Ք. Յախշյան, Գ. Կարապետյան, է. Բաղդասարյան:

Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի 40 անդամից 37-ը:

Զարուհի Ավետիսի Հակոբյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 19: Լևոն Բաբկենի Զուգասզյանի օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 14: Բոլորին դեմ քվեարկածների թիվը՝ 3, անվավեր՝ 1 քվեաթերթիկ:

Մ.Ռ.Գաբրիելյանը ներկաներին տեղեկացրեց կրկնակի ընտրությունների անցկացման ընթացակարգը, քանի որ պաշտոնի հավակնորդներից ոչ մեկը չի հավաքել գիտական խորհրդի անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությունը և հայտարարված մրցույթի առաջին փուլը համարվում է չկայացած:

Մ.Ռ.Գաբրիելյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին /կողմ՝ 36, ձեռնպահ 1/:

Կրկնակի ընտրությունների քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ներկայացրեց քվեարկության արդյունքները:

Քվեարկությանը մասնակցել է ֆակուլտետի գիտական խորհրդի 40 անդամից 35-ը:

Զարուհի Ավետիսի Հակոբյանի թեկնածության օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 15: Լևոն Բաբկենի Զուգասզյանի օգտին կողմ քվեաթերթիկների քանակը՝ 15: Բոլորին դեմ քվեարկածների թիվը՝ 5:

Մ. Ռ. Գաբրիելյանն առաջարկեց հաստատել քվեարկության արդյունքները:

Քվեարկության արդյունքները հաստատվեցին /կողմ՝ 34, ձեռնպահ 1/:

ՈՐՈՇԵՑԻՆ- Քանի որ կրկնակի քվեարկության արդյունքում ևս պաշտոնի հավակնորդներից ոչ մեկը չի ստացել գիտական խորհրդի անդամների ձայների ընդհանուր թվի մեծամասնությունը, ուստի Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթը համարվում է չկայացած:

ԼՍԵՑԻՆ 3. Պատմության ֆակուլտետի ուսանողներ՝ Ստելլա Արայի Սարոյանին, Տաթևիկ Մարատի Գրիգորյանին, Սոնա Արտաշեսի Փափազյանին և Գրետա Արտակի Մարտիրոսյան անվանական կրթաթոշակներ տրամադրելու հարցը:

Ելույթ ունեցան – դեկան Մ. Գաբրիելյանը, գրասենյակի վարիչ - դեկանի տեղակալ Հ. Մխոյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ ուսանողները վերջին 4 կիսամյակներում սովորել են գերազանց առաջադիմությամբ և ունեն հասարակական բարձր ակտիվություն, պատմության ֆակուլտետի գիտական խորհուրդը առաջարկում է 2024-2025 ուստարվա 2-րդ կիսամյակում նրանց տրամադրել անվանական կրթաթոշակ:

1. **Ստելլա Արայի Սարոյան** – *հնագիտություն* մասնագիտության մագ. 1-ին կուրս
«Մովսես Խորենացու» անվան
2. **Տաթև Մարատի Գրիգորյան** - *պատմություն* մասնագիտության բակ. 4-րդ կուրս,
«Արամ Մանուկյան»-ի անվան
3. **Սոնա Արտաշեսի Փափազյան** -*մշակութաբանություն* մասնագիտության բակ. 4-րդ կուրս,
«Թաթուլ Կրպեյան» անվան
4. **Գրետա Արտակի Մարտիրոսյան** - *կովկասագիտություն* մասնագիտության մագ. 1-ին կուրս,
«Նիկողայոս Ադոնց»-ի անվան:

Ընթացիկ հարցերի շրջանակում լսեցին.

Լ Ս Ե Ց Ի Ն 1. Պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի օգնականների թեկնածությունների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- դեկան Մ. Գաբրիելյանը, գրասենյակի վարիչ - դեկանի տեղակալ Հ. Մխոյանը, գիտ.քարտուղար Ք.Յախշյանը և այլք:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել ներկայացված թեկնածությունները.

1. Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչ, պ. գ. թ., դոցենտ Է.Լ.Զոհրաբյանի օգնական՝ հայցորդ Բաբկեն Աշոտի Ղազարյանին,

2. Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ., Ա.Գ.Դարբինյանի օգնական՝ առկա ասպիրանտ Իրինա Վրեժի Բաղալյանին,

3. Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ, պ. գ. թ., Հ.Խ.Մխոյանի օգնական՝ հայցորդ Աշոտ Արարատի Ծատրյանին:

ԼՍԵՑԻՆ 2. Մշակութաբանության ամբիոնի հայցորդ Անուշ Սաֆարյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - դեկան Մ. Գաբրիելյանը, գիտ.քարտուղար Ք.Յախշյանը, պ.գ.թ., դոցենտ Հռ.Պիկիչյանը և այլք: Ելույթ ունեցողները նշեցին, որ Անուշ Սաֆարյանը ուսումնառության նախորդ տարվա ընթացքում մասնակցել և ամբողջությամբ ավարտել է ասպիրանտական դասընթացները: Նա մասնակցել է մի շարք գիտաժողովների («Անկախության հուշարձանները հայ-ադրբեջանական կոնֆլիկտի համատեքստում» /Հայաստանը որպես քաղաքակրթական խաչմերուկ. պատմամշակութային առնչություններ/ Հայաստան/, 2024, /Signs, Symbols and Monuments in Armenian-Azerbaijani Conflict / Protecting and Accessing Cultural Goods in Wartime / Case Studies and Lessons from Armenia and Ukraine/ Germany /2024/, «Պատերազմը և հուշարձանը» /Պատերազմը, սահմանը և մշակույթը/, Հայաստան /2024/) և հանդես եկել զեկուցումներով: Անուշ Սաֆարյանը հայալեզու և օտարալեզու գիտական հանդեսներում տպագրել է 3 հոդված, մասնակցել դրամաշնորհային ծրագրերի:

Անուշ Սաֆարյանը ատենախոսության աշխատանքի վերաբերյալ շարունակել է դաշտային նյութի հավաքումը, պարբերաբար հանդիպել գիտական ղեկավար պ.գ.թ., պրոֆ. Հ. Պետրոսյանի հետ և քննարկել հետագա անելիքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով կատարված աշխատանքն ու գիտական ղեկավարի դրական կարծիքը՝ ատեստավորել հայցորդ Անուշ Սաֆարյանին:

ԼՍԵՑԻՆ 3. ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Դավիթ Ռուբենի Ճուղուրյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Է. Գ. Մինասյանը, Հ. Բ. Գրիգորյանը, Ք. Ժ. Յախշյանը և այլք:

Պրոֆ. Է. Մինասյանը նշեց, որ հայցորդը հաշվետու ժամանակաշրջանում ավարտել է «Ընդհանուր պատրաստվածության կրթամասի» ընտրովի դասընթացներին մասնակցությունը: Նա, իր՝ <<ՀԽՍՀ խորհուրդների գործունեությունը ՆԷՊ-ի տարիներին /1921-1928 թթ.>> վերտառությամբ թեմայի վերաբերյալ պատմական սկզբնաղբյուրների և գրականության ուսումնասիրությանը զուգահեռ, Հայաստանի ազգային արխիվում ուսումնասիրել է նաև թեմային առնչվող հայերեն ու օտարալեզու տպագիր վավերագրերը, իրականացրել է ատենախոսության առաջին և երկրորդ գլուխների շարադրումն ու խմբագրումը, տպագրության է ներկայացրել մեկ հոդված:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով կատարված աշխատանքն ու գիտական ղեկավարի դրական կարծիքը՝ ատեստավորել Հայոց պատմության ամբիոնի հայցորդ Դավիթ Ռուբենի Ճուղուրյանին:

ԼՍԵՑԻՆ 4. Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ Օվսաննա Քարամյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Արվ. դոկտոր, պրոֆ. Լ. Զուգասզյանը, դեկան, պ.գ.թ., դոցենտ Մ. Գաբրիելյանը և այլք:

Լ.Զուգասզյանը նշեց, որ Օվսաննա Քարամյանը հաշվետու ժամանակաշրջանում հավաքել և վերլուծել է հիմնական գրականությունը, հոդվածները, թեմային առչնվող գրեթե բոլոր նյութերը: Ուսումնասիրվել են Արա Հարությունյանի հարթաքանդակները և քանդակների ու գրաֆիկաների զգալի մասը: Հայցորդի կողմից Արա Հարությունյանի հեղինակած Սարդարապատի հուշահամալիրի և Սունդուկյանի անվան թատրոնի ճակատային մասի հարթաքանդակների վերաբերյալ պատրաստվել են գիտական հոդվածներ: Նա հանդիպումներ և քննարկումներ է ունեցել Արա Հարությունյանի ընտանիքի, նրա աշակերտների՝ Վիգեն Ավետիսի, Սահակ Պողոսյանի, Ալեք Ալեքյանի, ինչպես նաև արվեստաբան և արվեստագետ Արա Հայթայանի, արվեստաբան Սաթենիկ Վարդանյանի, պատմաբան Ռուբեն Վարդանյանի հետ, որոնցից ստացել է ատենախոսությունը պատրաստելու համար անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր:

Հայցորդը ավարտել է ատենախոսության ներածության և առաջին գլխի շարադրանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաշվի առնելով կատարված աշխատանքն ու գիտական ղեկավարի դրական կարծիքը՝ ատեստավորել հայցորդ Օվսաննա Քարամյանին:

ԼՍԵՑԻՆ 5. Հայոց պատմության ամբիոնի նախկին հեռակա ասպիրանտ Մարիամ Միշայի Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեմայի ճշգրտման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Հայոց պատմության ամբիոնի վարիչ Է.Մինասյանը, պ.գ.թ., դոցենտ Հ.Գրիգորյանը և այլք:

Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆ. Է.Գ.Մինասյանը ներկայացրեց, որ Մարիամ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման նախապես հաստատվել է՝ «Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Սփյուռքի թեմերը 1921 – 1939 թթ.» վերտառությամբ: Նա նշեց, որ տարիների ընթացքում ատենախոսության վրա աշխատելու ընթացքում պարզ է դարձել, որ թեման բավականին ընդգրկուն է: Ուստի, որպեսզի ատենախոսը կարողանա արդյունավետ աշխատել, անհրաժեշտ է այս լայն թեմայի շրջանակում առանձնացնել Եվրոպայի թեմերը, որի հետազոտությունը ծավալի և հիմնախնդիրների տեսանկյունից կարող է ծառայել որպես առանձին ատենախոսության թեմա:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մարիամ Հակոբյանի թեկնածուական ատենախոսության թեման ճշգրտել **«Հայաստանյայց առաքելական եկեղեցու Եվրոպայի թեմերը 1921-1939 թթ.»** վերտառությամբ:

Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ՝
պ. գ. թ., դոց. **Մ. Ռ. Գաբրիելյան**

Խորհրդի գիտական քարտուղար՝
պ. գ. թ. **Ք.Ժ.Յախշյան**

Իսկականի հետ ճիշտ է՝ **Ք.Ժ.Յախշյան**